ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 31.05.2019թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արփյոմ Գրիգորյանը, Արմեն Մատինյանը, Մարինե Հովհաննիսյանը, Վահագն Ավագյանը, Վահե Դոխոյանը, Հայկազ Մովսիսյանը, Գայանե Քալանթարյանը, Սեյրան Ղամբարյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Սեյրան Աղաբեկյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Արեն Խաչատրյանը, Կարեն Դավթյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Արմեն Ավետյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արման Սիրադեղյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝

Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Դավիթ Սիմոնյանը, Արման Ափինյանը, Խորեն Վարդանյանը, Սոխակ Մելքոնյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

Տիգրան Նազարյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Հայկազ Սիմիկյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Արևիկ Լոքյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, քաղաքացիներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2019 թվականի 31.05.2019 ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Նիստը վարող, համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանն առաջարկեց մինչ օրակարգի հարցերին անցնելը, շնորհավորել ավագանու Հայկական Վերածնունդ կուսակցության ավագանու խմբակցության նոր անդամ Արեն Խաչատրյանին, ավագանու անդամի պարտականություններին անցնելու կապակցությամբ:

Մինչ օրակարգին անցնելը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը, սահմանված կարգով, ընթերցեց համայնքային ծառայողի երդման տեքստը և հանդիսավոր ստորագրեց այն:

Նիստը վարողն առաջարկեց օրակարգի 12-րդ հարցը քվեարկել նոր խմբագրությամբ՝ «Վանաձոր համայնքի Բազում թաղամասի Բուլղարական-1 և Բուլղարական-2 առանձին տարածքների հատակագծման նախագիծը հաստատելու մասին»:

Այնուհետև նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել խմբագրված օրակարգն ամբողջությամբ:

Կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

2. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ

զեկ. Ա.Հովհաննիսյան

3. Վանաձոր համայնքի ավագանու 29 մարտի 2018 թվականի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Ա.Հովհաննիսյան

4.Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ.Ս.Աբովյան

5. «Վանաձոր համայնքի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

զեկ.Ս.Աբովյան

6. Վանաձոր համայնքի Բաղրամյան պողոտայի թիվ 112 հասցեում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս.Աբովյան

7. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.Ս.Աբովյան

8. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին

զեկ.Ս.Աբովյան

9. Աիդա Կոնստանտինի Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

զեկ.Ս.Աբովյան

10. Վանաձոր համայնքի Ներսիսյան նրբանցքը, Ներսիսյան փակուղին և Բաթումի փակուղին թվային ձևով անվանակոչելու մասին

զեկ.Ս.Աբովյան

11. Վանաձոր համայնքի Բազում թաղամասի Բուլղարական-1 և Բուլղարական-2 առանձին տարածքների հատակագծման նախագիծը հաստատելու մասին

զեկ.Ս.Աբովյան

12.Ռոզա Բեկչյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

13. Անժելա Կիրակոսյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

14. Թագուհի Մարտիրոսյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

15. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.Մ.Ասլանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Ավագանու անդամներ Արմեն Մատինյանն առաջարկեց ավագանու հանձնաժողովին ներառել համաֆինանսավորմամբ իրականցվող ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման գործընթացում:

Ավագանու անդամ Քրիստ Մարուքյանը փաստեց ծրագրերի իրականացման հրատապության գնահատման չափորոշիչների սահմանումը:

Ավագանու անդամների առաջարկը և փաստումը համայնքի ղեկավարի կողմից ընդունվեց ի գիտություն:

Այնուհետ զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 6 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Ք.Մարուքյան, Վ.Կռոյան, Ա.Կարապետյան/, ձեռնպահ՝ 3 /Կ.Ղուկասյան, Ա.Ավետյան, Ա.Սիրադեղյան/ ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:

Նիստը վարողն առաջարկեց ավագանու անդամ Արտյոմ Գրիգորյանի թեկնածությունը:

Նիստը վարողն առաջարկեց հավանություն տալ Արտյոմ Գրիգորյանի թեկնածությանը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի ավագանու 29 մարտի 2018 թվականի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, դեմ՝ 1 /Վ.Ավագյան/, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - «Վանաձոր համայնքի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինություն և հողամաս անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Բաղրամյան պողոտայի թիվ 112 հասցեում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, դեմ՝ 4/Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Վ.Ավագյան/, ձեռնպահ՝ 2 /Ա.Ավետյան, Ա.Սիրադեղյան/ ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 5/Ք.Մարուքյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Վ.Ավագյան/, ձեռնպահ՝ 2 /Վ.Կռոյան, Ա.Կարապետյան/ ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ Աիդա Կոնստանտինի Ավետիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ Վանաձոր համայնքի Ներսիսյան նրբանցքը, Ներսիսյան փակուղին և Բաթումի փակուղին թվային ձևով անվանակոչելու մասին:

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը: Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Բազում թաղամասի Բուլղարական-1 և Բուլղարական-2 առանձին տարածքների հատակագծման նախագիծը հաստատելու մասին

- Զեկուցեց աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ - Ռոզա Բեկչյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, դեմ՝ 3 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ - Անժելա Կիրակոսյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, դեմ՝ 3 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ - Թագուհի Մարտիրոսյանին վարձակալությամբ տարածք հանձնելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, դեմ՝ 3 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:

15. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2019 թվականի հունիսի 21-ը:

Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2019 թվականի հունիսի 21-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11.00-ն:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը